ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«02» օգոստոս 2023 թ. **N** *88-Ա/3*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N38-Ա/3 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշման N 1 հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N 1148-Ն որոշման 8-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի 2018 թվականի հունիսի 19-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակելու մասին» N38-Ա/3 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) հրամանի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակել Կոմիտեի նախագահի խորհրդական Գարիկ Սարոյանին»:

2. Գարիկ Սարոյանին՝ ապահովել որոշման պահանջների կատարումը:

3. Կոմիտեի քարտուղարության պետ Հասմիկ Հովհաննիսյանին՝ կազմակերպել սույն հրամանի և պատասխանատու անձի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը Կոմիտեի պաշտոնական կայքէջում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

8/2/2023

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ